

~~N1136~~


# ՅԵՐԱԺԻՇՏԱՑ ԴԱՆԻԿԸ



БИБЛІОТЕКА  
ІНСТИТУТА  
ДОСТОВІРНОСТІ  
Академії Наук  
СССР

ԽՈՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱԳՐԱԿԱՆՔՆԵՐԻ  
ՄՈՍԿՎԱ

1928



1928/841

-6 NOV 2011

Հայ 31

Լեռնի

891.715  
հ-38

# ՅԵՐԱԺԻՇՏ ԴԱՆԻԿԸ

Թարգմ. ԽՆԿՈ-ԱՊԵՐ



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԻՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՍՊՈՍԿԱ 1928

20 MAY 2013

3456


ԿՐԵԱԿԱՆ ՊՐԱՄԱՊՐԵԼ ԵՎ Գ. Ֆ. ՄԻՐԻՄԱՆՈՎԻ ՀՐԱՄԱՐԱԿՀՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻԳԻՆ 36160180



59948-66

Главлит № 98313      Заказ № 804      Тираж 3000



БИБЛІОТЕКА  
ІНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академія Наук  
ССР

### ԴԱՆԻԿԸ ՅԵՎ ԻՐ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Դանիկի կյանքը փոփոխող բոլոր հրաշքներն սկսվեցին շատ սովորական կերպով։ Նրա շրջապատը նույնպես ծայր աստիճան սովորական եր։

Նեղիկ, կեղտու քուչան՝ յերկու շարք աղքատիկ ծռված տնակներով հասնում եր համարյա մինչև այն ձորակը, վոր միւնույն ժամանակ քաղաքի աղբն ածելու համար եր, և վորտեղ յերեխաները տարված փորփռում եյին, վորոնելով կոճակներ, կոնսերվի թիթեղյա տուփեր և նման թանգարժեք իրեր։

Ինքը Դանիկը մի շատ սովորական յերեխա։

Աչքերը՝ մտորուն, խաժիկ։

Մազերը փնջլիկ՝ արևից գունափոխ, գունատված։ Քիթը հենց ենպես կոճակ։


Նրա աչքերն ու բերանը շարունակ լայն բաց են, վոր շատ տեսնի և շատ զարմանա լայն աշխարհի վրա։

Կարկատած շապիկը և այդպիսի յել վարտիկը կազմում եյին նրա ամբողջ հագուստը, վորն ուներ միայն մի շոայլություն. այդ լայն կաշե գոտին եր՝ փայլուն թոխով։ Թոխան գտնվել եր, ինչ բախտավորություն, աղբակույտը փորփրելիս։ Հազուստի պակասը յերբեմն լրացնում եյին պատառուած կոշիկները։ Ահա և ամենը։

Այն մոմենտին, յերբ Դանիկը կանգնած էր նոր կյանքի առաջ,  
ևս հանգիստ շատախոսում էր պատշգամբի մոտ իր անբաժան  
ընկերների՝ Գալոյի և շեկիկ Ալոյի հետ:

— Մայրս այսոր կարկանդակ ե պատրաստել, միջին ել  
բալ ե դրել:

Բայց հենց այդտեղ ընկերները նրան ծաղրեցին:



— Բան ե ասում, մենք արդեն հինգ անգամ ենք յեփել. —  
ասավ Շեկիկ Ալոն:

— Մենք արդեն տաս անգամ, — ձայն տվեց Գալոն:

Դանիկը չփեց:

— Զգնամ մայրիկից կարկանդակ բերեմ, հօր... — ծուլորեն  
ասավ նա:

— Հա, հա, Դանիկ, բեր, — խոսք մեկ արած համաձայնվեցին  
մացածները:

— Ինձ համար ել, ինձ համար ել, — ձայն տվին նրան վազելիս  
Դանիկը արհամարհանքով վեր քաշեց ուսերը: Նա գիտեր, վոր  
բոլորի համար ել կարկանդակ կրերի, բայց պետք ե իր կողմից մի  
ձև բանեցներ: Ձև բանեցնելն այն յեղավ, վոր վոտքն առավ քարին  
և ինքն ընկավ գետին:




### ԳՅՈՒՏԸ

Այդ ըրից Դանիկը կարող էր իր կյանքը փոխված հաշվել,  
յեթե մի քիչ գիտենար ապագան:

Ընկել էր նա իր կարճ կյանքում գուցե և հարյուր անգամ,  
բայց այդտեղ ընկավ բոլորովին զարմանալի կերպով:

Նրա աչքերի առաջ փայլեց մի ինչ վոր սպիտակ փոքրիկ բան:  
Նա վերցրեց իր գյուտը և մի մեծ ուրախություն յեկավ վրան: Այդ  
գյուտը թանգարժեք բան էր՝ մի կլորիկ-պլորիկ արծաթե յերկու  
շահանոց:



— Այս սեմիչկա կառնեմ,—մտածում եր նա, —մի փութ...  
Վոչ, գլխումը ծագեց ուրիշ միտք, —ավելի լավ ե կանֆետ:

Նա փողը պինդ սեղմել եր բուան մեջ և վճռել եր թագցնել  
նրան ամբողջ աշխարհից:

— Մայրիկ, մուրաբա տուր, —ասավ նա, կանգնելով դուան մեջ  
և շարժելով մի վոտը՝ քաջություն կցույց տալու համար: Դանիկը  
մորից վախում եր. մայրը յերբեմն ուտեցնում եր, յերբ չարացած եր  
լինում ծանր աշխատանքից:

Բայց այս անգամ մայրը նրան ամբողջ չորս կարկանդակ տվեց և  
մի թեթև ել մայրական ապտակ՝ ճամպապաշար:

## ՄԱՆՐԱՎԱՃԱՌԸ

Դանիկը մի կարկանդակը կերպվ և գնաց վ փողոց մնացած  
յերեքը յեղայրաբար բաժանելու ընկերներին: Մինչև կարկանդակ  
բաժանելն իր հիացած ընկերներին, փողոցի ծայրին յերևաց Դանիկի  
կյանքի առաջին հրաշքը:

Այդ հրաշքը մոտեցավ պղնձաթելերից գործած զամբյուղիկներով, թիթեղի թեյնոցներով, տոլչաներով և զանազան զիզի-բիզի  
մանրունքներով:

Դա—վոտի վրա առևսուր անող չարչի-առևսրականներ, թիթեղեր իրեր վաճառողը: Նա հասավ յերեխաններին, նատեց պատշաճամբին հանգստանալու, առաջը դնելով իր ապրանքը — շրթունքներով ածելու գարմոնների կապոցը: Գարմոնները շինված եյին փայտից և թիթեղից: Նա յերեխաններին ասավ.

— Եյ, տղեք ջան, գարմոնիկ առեք:

— Ինչ արժե... — հարցրեց Դանիկը:

— Յերկու շահի, միայն յերկու շահի, —պատասխանեց չարչին:  
Նա մի գարմոնիկը հանեց կապոցից, անսղեց և ասավ.

— Այս լավը կլինի, —հետո դրեց շրթունքներին և ածեց մի հասարակ փողոցային պարի յեղանակ: Յերեխաններն ել չկարողացան



տեղները նստել: Զեռքերն ու վոտները հենց այնպես ինքն իրենց պարում ելին.

«Պիկ, պիկ, այ կապիկ,  
Հազել ես ալ շապիկ,  
Կապել ես շալ գոտիկ,  
Արի մոտիկ,  
Վերցուր վոտիկ,  
Այ բրդոտիկ.  
Վեր-վեր կցատկես,  
Սուտ-սուտ կսատկես,  
Մին ել կուզեկուզ՝  
Դես ու դեն կուկուզ,  
Վարժապետ Բուբուս:  
Պիկ, պիկ, այ կապիկ.—և այլն:

Դանիկը նստել եր ու վճռում եր իր կյանքի ամենակարևոր հարցերից մեկը՝ գնել գարմոնիկ թե չգնել:

Յեվ ափսոս չի յերկու շահանոցը, միթե քիչ փող ե՞ւ բայց այնպես ե ուզում գարմոնիկն առնել, վոր ասել չի լինի: Ուզում ե վոր ուզում ե, սրտանց ե ուզում: Գայթակությունը շատ մեծեր:

— Ապեր, յես կառնեմ...—ասավ Դանիկը,—կսովորեցնես ինձ փշելը:—Նա մեկնեց յերկու շահանոցը: Շեկիկ Ալոն և Գալոն նախանձից մեռնում ելին:

— Տես սատանին: Ունեոր ե՝ ասես մորից գողացած չինի, գործի անունն ինչ ե, —ասավ բարձր շշուկով Շեկիկ Ալոն:

— Ստում ես, ճամբին գտա, —պատասխանում ե Դանիկը:

— Սովորեցուր, ապեր:

— Եղ եր պակաս, ձեղ ինետ քաշ գալու ժամանակ չունեմ, բայց թե ելի...—պատասխանում ե չարչին, —ապա նայիր:—Նա գարմոնիկը դրեց շրթունքներին և գարմոնիկը լսուեց, և ուրախ յերգը հոսեց: Դանիկը տասը բոպեյից գարմոնիկից մի բան քաղեց և՝ յեղանակին նմանեցրեց, իսկ դարձյալ հինգ բոպե անց՝ չարչուն ճանապարհ դրեց յերգի իսկական յեղանակով:

Զարչին հավաքեց գետնին դրած ապրանքը և ուշադիր լսում եր Դանիկի յերգի հնչյունները:

Հավաքելով և իր վրայից կախ տալով ծախու բոլոր ապրանքը՝ նա գլխով արավ յերեխային և կամաց գնաց իր ճանապարհը: Մի քանի քայլ անելուց հետո՝ նա յետ նայեց.

— Եյ, տղա, —գոչեց նա: Դանիկը վազեց գեպի նա:

— Լավ պահիր գարմոնիկը, —ասավ չարչին, —նա քեզ հեռուն կտանի: Յեթէ լավ պահես, աշխարհի տերն ես:

Նա մի ըոպե մտքի տակ ընկապ, հետո ծանր հառաչեց.

— Յես ել այդպիսի գարմոնիկ ունեյի, բայց խլեցին ձեռքիցս:

Նրա ազատ աջ ձեռքը մի լայն շարժումով դրված եր յերեխայի խոնարհած գլխին:

Մի անծանոթ, նրբին վիշտ պատել եր Դանիկի հոգին՝ միշտ այնպես անհոգ: Նա սինդ սեղմել եր ձեռքում գարմոնիկան:

— Ե, գնա...—Դանիկի աչքերին նայելով, ասավ չարչին: Դանիկը յեկավ ընկերների մոտ: Յերբ նա յետ դարձավ նայելու գնացող չարչուն, փողոցը բոլորովին դատարկ եր:

## ՎԵՃԸ

— Տուր մի ածեմ...—ասավ Ալոն, ձեռքը մեկնելով գեպի գարմոնը: Բայց Դանիկը ամուր սեղմել եր կրծքին այն թանկագին իրը և համառ թափահարում եր զլուխը.

— Այ, ինչ ժաման ե...—վիրավորված ասավ Ալոն:

— Զի տալիս, չի, յետկից չենք ընկնի, —ասավ Գալոն:—Անցյալ տարի գանակս ջարդեց, իսկ հիմա գարմոնը չի տալիս:

Մտածմունքի տակ ընկած Դանիկի լսությունը Ալոյին վիրավորել եր:

— Դեհ, շուտ այստեղից գնա, իմ պատշգամբումն ես նստել...—կոպտաբար ասաց Գալոն:

Դանիկը հլու վեր կացավ և փողոցով գնաց տուն: Նա գնում եր զլուխը կախած: Ընկերները նրան առաջնորդեցին չարացած հայացքներով: Դանիկը իսկի յետ չնայեց:

## ՀՐԱՇԱԼԻ ԳԱՐՄՈՆԸ

Նա դուռը փակ գտավ. մայրը տանը չեր: Նստեց չարդախում,  
ուր կեսորվա արկը քիչ ստվեր եր տվել, և սկսեց զննել իր գնած  
գանձը:

Առանձին բան չունի, միայն մի մեխը ծուռն է խփած:

Նա փորձեց ածել գարմոնիկը: Լավ է դուրս գալիս: Մեկ ել  
ածեց, ել ավելի լավ:

Բայց այն ի՞նչ տարորինակ խոսքեր ասավ մանրավաճառը:  
«Յեթե գարմոնը պահես, ամբողջ աշխարհի տերն ես»: Միթե գար-  
մոնը թնդանոթի պես բան է, վոր նրանով աշխարհ նվաճես:

— Հիմարի մեկն է մանրավաճառը...—մտածեց Դանիկը և ելի  
ձեռք առավ գարմոնիկը:

Նա գարմոնի բոլոր տված ձայները փորձեց: Յերկու հնչյուն  
նրան շատ դուր յեկան: Նա յուրաքանչյուր ձայնին ականջ եր դնում  
և մի քանի անգամ կրկնում: Բայց այն ձայները, վորոնք հենց  
առաջ նրան միանգամից դուր յեկան, նա շուտ սովորեց զանազա-  
նել: Մանրավաճառի խորհրդավոր խոսքերը, նույնիսկ մանրավա-  
ճառին նա շուտով մոռացավ: Նա փորձում եր ձայները մեկը  
մյուսի յետեկից. այդպես նստեց նա միւնույն տեղը չորս ժամի  
չափ, մինչև մոր գալը: Նկատելով, վոր նա մոտենում է դռներին,  
շտապ գարմոնը զրեց քարի յետեւ:

— Այդ ի՞նչպես է, վոր տանն ես,—կասկածանքով հարցրեց  
մայրը:

Դանիկը տիտիկ անողը չեր, և նրան տանը պահելն անկարելի  
յեր լինում: Իսկ նա այդտեղ հանգիստ նստած է և ընկերներից  
մեկն ել չկա մոտը:

Վոչինչ չասավ Դանիկը:

Մայրը պատասխանի չսպասեց, այլ դուռը բանալով, սենյակ մտավ:

— Զգնաս, պիտի ճաշենք.—ասավ նա ներսից:

Ճաշելուց հետո Դանիկը հանեց գարմոնը քարի յետեկից և զրեց  
գրպանը: Մինչև անգամ իրեն թեթև զգաց, գարմոնն իր մոտն եր,  
նշանակում է չի կորչի:

Հարմար ժամանակ գտնելով, Դանիկը տանից ծլկեց ձորակը,  
նստեց մի շվաք տեղ և հանեց իր գանձը:

Նա սովորել եր լավ զանազանել ձայները, բոլոր ելեւշները,  
նայելով թե վորն ինչ տպավորություն եր թողնում իր վրա: Ամեն



մի հնչյուն նրա մեջ արձագանքում եր, բայց տարբեր յեղանակով:  
Այս բանը նրան ավելի մեծ գարմանք պատճառեց, քան այդ որվա  
բոլոր գեղքերը:

Նա մինչև անգամ ձեռքը սեղմեց սրտին և ուշադիր ականջ  
զրեց: Սիրալ խփում եր արագ և անհամաշափ: Բայց նա արձագանքող  
վոչ մի բան չգտավ:

Փորձեց նորից «Պիկ-պիկը». թեթև պարերգը տալիս եր նրան դուրեկան գլխապույտներ: Ուզում եր ծիծաղել և միենույն ժամանակ պարել: Բայց դժվար եր գարմոնից անջատվելը:

Այդ որվանից Դանիկի համար սկսվեց նոր, բոլորովին առանձին կյանք:

### ԿՈՒՎ. ՄԱՏՆՈՒԹՅՈՒՆ

Ամբողջ որերով ծլկվում եր ձորակը իր գարմոնով: Ժամերը թռչում եին աննկատելի: Միայն ճաշի դեմ եր վերադառնում տուն, այն ել հոգնած, բայց միշտ ժպտերես:

Նա իր պարապմունքները միշտ թագցնում եր իր մորից: Մի կտոր հաց առած՝ առավոտյան փախչում եր ուղղակի ձորակ:

Ընտրել եր իր համար մի յերկու հարմար տեղ ձորակի կանաչ լանջերին: Նստում եր և այստեղ, և այնտեղ, նայած թե վորաեղ հով ե, վորտեղ ստվեր կա:

Յերբեմն աղբահանները գալիս եին, թափում եին աղբը, բղավում եին ձիերի վրա, և անիմսերը գոգուացնելով, քշում, յետ եին գնում:

Յերբեմն ել տղերքն եին գալիս փորփրելու աղբակույտերը, բան փնտուելու իրենց հարազատ աղբակույտերում: Տղերքը կովում եին, վիճում եին գտած կոճակների համար, քաշքառում եին և խաղում եին: Բայց Դանիկը չեր մոտենում իր ընկերներին: Նրանց աղմուկը նրան ջղայնացնում եր, մեկ ել՝ վախում եր, չլինի թե գարմոնը նորից ուղեն: Հիմա, յերբ առաջին բոնկումն անցավ, նա ամաչում եր, վոր գարմոնը չի տվել Ալոյին: Բայց յեթե մեկը դարձյալ խնդրեր գարմոնը՝ նա ելի պոկ չեր գալ նրանից՝ ավելի քաջաբար, ավելի ուժեղ կթափահարեր իր գլուխը, թե չի կարելի: Գարմոնիկը ուրիշ ձեռքին տեսնելը նրա համար սարսափելի բան եր թվում: Վայ թե մի բանը կոտրեն: Բայց տղերքը չերեցին նրան և մի անգամ Գալոյի մոտ՝ պատշգամբում նստած՝ հետևում եին, թե ինչպես Դանիկը դուրս յեկավ դարբասից և գնաց դեպի աղբանոցը:

— Հա, գարմոն ե ածում... տեսեք, տեսեք, մեծ բանի վրա յե, — ասավ Ալոյն: — Բայց թե ինչպես ե ածում, այդ ե բանը: Չտվեց ել թե մի աչքով գոնե մտիկ տայի՛ ինչ կա:

— Զդոգստենք, հ՞ը... — մտահոգ առաջարկեց Գալոյն: — Ի՞նչ դնդատել, սպասիր, այնպես անենք, վոր մայրը նրան ծեծի... — ասավ Ալոյն: Յեվ նա վճռեց իսկույն գործի անցնել: — Մոքիր, այ մոքիր... — ասավ նա տնկվելով Դանիկենց դռան առաջ: Դանիկի մայրը տան մոտ լվացք եր անում:



— Ե, ասելիքդ ի՞նչ ե, այ սողի... — ասավ նա կոպտաբար: Նա Ալոյին չեր սիրում, վախում եր թե նա վատ բաներ կսովորեցնի Դանիկին:

— Մոքիր, այ մոքիր, ձեր Դանիկը գարմոն ե առել: — Ի՞նչ զարմոն: Ի՞նչ ես փշում, նա վող չունի, վոր զարմոն առնի... ի՞նչ ել հարուստ ես գտել. յես նրա մոտ գարմոն չեմ տեսել:

— Ճիշտ եմ ասում, մոքիր, ինձ մոտ առավ յերկու շահու:  
 — Դու ել չգիտես թե ինչ ես ասում գլախցդ դուրս. Դանիկին  
 յերկու շահի վճրտեղից:  
 — Նա ասում եր ճամբին զտա: Առնելը՝ վաղուց ե առել, դեռ  
 անցյալ շաբաթ. մեղ հետ ել կովեց, գարմոնը մեղ չտվեց:

### ԳԵՂԱՐՎԵՍԸ ՅԵՎ ԿՅԱՆՔԸ

Դանիկն այդ որը, աղքանոցի մոտ նստած, աշխատում եր գար-  
 մոնի միջոցով վորսալ մի ինչ վոր անծանոթ, բայց հարազատ, իր  
 սրտին մոտ յեղանակ. այն յեղանակը, վոր մի ժամանակ աղոտ  
 կերպով լսել ե, և հիմա յել իր շուրջը հենց այնպես թրթում ե:

Զղային դողը բռնեց նրան, յերբ նա զգաց, վոր հնչյունները  
 մոտենում եյին խկական յեղանակին:

Մաեղծվեց մի թեթև, թրթուն զգայուն յերգ:

Վերջապես նա ածեց այդ յերգը վերջին անգամ: Հնչյուններում  
 կար համարձակություն, կար նվաճումի ուրախություն:

Այդպիսի ուրախություն նա յերբեք չեր զգացել:

Դանիկին տանը փոթորիկ եր սպասում: «Դու ի՞նչպես համար-  
 ձակվեցիր, անպիտան, առանց հարցնելու գարմոն առնել: Մայրը  
 քարին քացի տալով աշխատում ե, իսկ նրա հետ պետքը չի: Յերկու  
 շահին գարմոնի ե տվել՝ քիչ փող ե: Ինչ կա վոր՝ ճամպին ե զտել:  
 Կարգին տղան մորը կտար, իսկ դու խաղաթիք յես տալիս: Աչքերս  
 լույս, յես ել պիտի ասեմ թե աղա ունեմ, նախրում հորթ ունեմ»:

Բանը նրանով վերջացավ, վոր Դանիկը մի քանի հնչուն ապտակ  
 ստացավ մորից: Դանիկը քաջաբար տարավ ապտակները: Դանիկը  
 լուռ եր, Մայրը դեռ յերկար սուսիկ հեկեկում եր: Յերեխան նստել  
 եր անկյունում ու շատ եր խղճում մորը, բայց առաջին անգամ  
 զգաց, վոր մայրն իրեն, Դանիկին, չի հասկանում: Ուզում եր, վոր  
 նա հասկանա, բայց ի՞նչպես բացատրեր:

### ԴԱՆԻԿԻ ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Այն ժամանակից սկսած նա ավելի տանն եր մնում, նստած  
 դռան առաջ կամ չարդախի մոտ: Ամբողջ ժամանակը նվիրում եր



հրաշալի հնչյուներին՝ գարմոնում թագնված։ Նա աշխատում էր քաղել նոր ու նոր հնչյուններ։ Մայրը ներքուստ գոհ եր. «Գոնե չարություն չի անում յերեխան»։

Դանիկը նստում էր դոան քարին, պարապում էր նոր անձանոթ, չփառես վորտեղից դուրս ընկած յերգով։ Բայց գործը դանդաղ եր առաջ գնում։ Յեվ հոգնած նա ձեռք առավ հին, թեթև, առաջուց սովորած յերգերը։ Այստեղ կային և շարմանկի և զրամաֆոնի, ինտեր նացիոնալի յեղանակները, նույնպես և հեղափոխական քայլերգի յեղ անակ, վոր լսել եր քայլյերթի ժամանակ, մինչև անգամ Զայկովսկու «Բարկարովից» մի կտոր, վորի յեղանակը լսել եր մեծ տան բաց լուսամուտներից։ Դանիկը չեր իմանում, թե այդ ինչ ե, ինչպես ե կոչվում, բայց նրան դուր եյին դալիս ջրի պես ծփացող հնչյունները, և նա շատ ջանք գործ դրեց, վոր սովորի կրկնել այդ հնչյունները գարմոնով։

Դռան մոտ նստած, վոչ մի բանի վրա չմտածելով, վոչինչ չնկատելով, նա միայն իրեն եր լսում, ուղղակի խմում եր իր հարուցած հնչյունները, նրանց ներդաշնակությունից զգալով յերբեմն մի սուր ուրախություն։

Մի կին վեղրոներով անցավ նրա մոտից։ Հարեան մանրավաճառը տուն վերադարձավ շուկայից։ Բարձրահասակ ծերուկը անցավ Դանիկի մոտով, նայեց նրան և յետ դարձավ։

— Դու այդ ի՞նչ ես ածում։

— Այնպես, ելի. գարմոն եմ առել...—կամաց ասավ Դանիկը։

— Ե, նորից ածիր...—ասավ ծերուկին։

Դանիկը վոչ մի կերպ չեր ածի ոտար մարդու մոտ, բայց ծերունին այնպես քաղցր ժպտաց, վոր Դանիկը ակամա վերցրեց զարմոնը։

Հոսում եյին պարզ, անպաճույճ յերգերը՝ հեղափոխական, փողոցային և ժողովրդական, թե ուրախ, թե տիսուր, բայց բոլորն ել իսկականի հետ ուղիղ։ Վերջացրեց նա, կրկն յերգելով մի կտոր Զայկովսկու «Բարկարովից»։

— Դու մինչև անգամ այդ ել զիտես, — հոհոաց ծերունին։ — Բայց վորտեղից։

— Քաղաքումն եմ լսել։



## ՀՐԱՇՔ ՅԵՐԳԸ

— Հիմա դու նվագիր,—ասավ ծերունին:  
Բայց Դանիկը քաջությամբ շարժում եր գլուխը:

### ԲԱՐԻ ԾԵՐՈՒԽԻՆ

— Ուզում ես ինձ մոտ գալ, յես քեզ ցույց կտամ իսկական յերաժշտությունը, — ասավ ծերունին: Դանիկը վեր թռավ քարի վրայից, արտահայտելով գնալու պատրաստակամություն:

— Ի՞նչ չուստրիկ տղա յես... — ծիծաղեց ծերունին:

Դանիկը նրա յետևից գնալիս՝ մտածում եր. «Ճես չեյի գնալ, բայց խոստացավ իսկական յերաժշտություն ցույց տալ: Գուցե և ճիշտ լինի»:

Մի նեղ ծառերի մեջ կորած միջավորոցում ծերունին գրավանից հանեց բանալին:

— Մենակ եմ ապրում... — ասավ նա, բանալով դռնակը, — միայն մի Բողար ունեմ:

Անագին շեկ գամփոր թռավ նրա կրծքով և իսկույն մոնչաց՝ նկատելով Դանիկին: Նա ժառանգական, սերունդից-սերունդ անցած ատելություն ուներ դեպի յերեխաները:

Ծերունին շատ չարչարվեց, մինչև վոր կարողացավ նրան Դանիկի հետ հաշտեցնել:

Նա տարավ յերեխային այգու միջով, վորտեղ մի քանի վարդի թփեր կային: Փոքրիկ պատշգամբով նրանք անցան սենյակ: Նոտաները կույտ-կույտ թափված եյին հատակին՝ աթոռների մեջ, դրված եր դաշնամուրը, իսկ դաշնամուրի վրա — ջութակը տուփի մեջ: Փոշու հաստ շերտն ամեն ինչ ծածկել եր:

Ծերունին ուղիղ մոտեցավ պիանոյին, նստեց և նվագեց: Նրա մատների տակից շաղ ընկան անհամար հնչյուններ, խուրձ-խուրձ, վորոնք հեղեղի պես վեր եյին թռչում և այնտեղ նոսրանում՝ ցրվում: Դուրս պլրծավ մի փոքրիկ, վշտակի յերգ: Նա զարթեցրեց Դանիկի սրտում վախի և վշտի զգացմունք: Հետո քնքուշիկ գլորվեցին տաք ու ծփուն կոհակներ, լվացին-տարան վիշտը և վախը, բոնեցին նրա սրտից և դուրս բերին ափ՝ տիրաբար և շատ զգույշ:

Մի թեթև շառաչով յետ գնացին տաք, վաղվզուն ալիքները՝ Տիրեց լոռություն:



— Զեր նվագից հետո իմը հիմար բան կթվա:  
— Ե՛, ինչո՞ւ յես այդպես ասում. չես ուզում, ուն յեկ, միա-սին փորձենք:

— Դու գարմոնով նվազիր, յես դաշնամուրով կնվազակցեմ: Դու չգիտես նվազակցելը ինչ բան ե: Դու առաջ նվազիր, իսկ հետո մենք միասին՝ յերկուսով:

Դանիկն ամաչում եր իր յերգն ածելուց: Իր յերգը թվում եր շատ խղճուկ, վողորմելի: Բայց մյուս կողմից ուզում եր լսել, թե ինչ ե այդ միասինը:

Նա նվազեց այն յերգը, վոր ինքն եր հնարել՝ նստած ձորակում, աղբանոցի մոտ:

— Դեհ, հիմա սկսիր սկզբից...—ասավ ծերունին, յերբ Դանիկը վերջացրել եր:

Դանիկն սկսեց: Միաժամանակ լսվեցին դաշնամուրի հնչյունները և յերեխան, ականջ դնելով, հասկացավ, վոր իր յերգն ածեց և, լայնացավ: Հնչեցին նոր ձայներ մի ինչ վոր հրաշալի ձեռվ հինի հետ Գարմոնը տիրաբար և վստահ տանում ե իր յետերց դաշնամուրը, վոր արձագանքում ե նրա ամեն մի շարժումը: Վերջ:

Դանիկը կանգնած եր դաշնամուրի մոտ կարմրատակած, մազերը թափթփած, ճակատին քրտինքի կաթիլներ:

— Քեռի, — վհատ աղաղակեց նա, — ելի մի անգամ, այսպես լսվ ե դուրս գալիս:

Նա շատ եր վախում, թե ծերունին կմերժի և ինքը չի զգա այն բավականությունը, վոր հենց նոր եր ապրել: Ծերունին, ծիծաղելով, համաձայնեց: Նորից հոսեց պարզ յերգը, վոր նվազակցումի հետ կարող եր դուր գալ և ավելի պահանջկոտ ունկնդրին:

— Այ, ինչ լսվ ե դուրս գալիս, — հիացած մտածում եր Դանիկը:

— Կաց, — հարցըց ծերունին, — իսկ վորտեղից ե այս յերգը: Յես այսպես յերգ յերբեք չեմ լսել:

Մոմենտը հուսահատական եր, բայց պիտի ասվեր.

— Յես եմ հնարել..., ձորակում...— հազիվ լսելի շշուկով վերջացրեց Դանիկը:

— Ոհա, դու կոմպոզիտոր ել ես..., — բացականչեց ծերունին: — Նա, ով յերաժշտություն ե հորինում, կոմպոզիտոր ե... — բացարեց նա, նկատելով յերեխայի հարցական հայցը:

— Դու շուտ-շուտ ինձ մոտ արի, — ասավ ծերունին մնաս

բարեկի ժամանակ, — արի, կնվազենք, կզրուցենք: Դու ել յերաժիշտ, յես ել յերաժիշտ, ահա քեզ լավ բան:

Դանիկը ժպտաց: Այնպես ծիծաղելի թվաց նրա այդ համեմատությունը իր և ծերունու մեջ:

— Այ թե նվազում ե, — գնալով ասում եր Դանիկը, — այս թե յես ել նրա կեսի չափ...



### ԴԱՆԻԿՆ ՈՒ ՍԵՐԳԵՅ ԱԼԵՔՍԵՅԻՉԸ

Շուտով Դանիկը կանաչ ցանկապատ փոքրիկ տան մարդը դարձավ:

Մինչև անգամ վիթխարի Բողարն ել, յեթե հարձակվում ել եր նրա վրա, հարձակվում եր նրա գեմքը լիզելու իր տաք, փշոտ լեզվով: Դանիկը չեր վիրավորվում:

— Մտերիմ շուն ե, — ասում եր Դանիկը, շոյելով նրա խիտ մազերը:

Դանիկն զգում եր դեպի իրեն լսվ վերաբերմունք և կարծես թե նա այստեղ չերմություն եր զգում, վորովհետեւ նրա խիստ և միշտ հոգատար մայրը յերես չեր տալիս տղային:

Յերեխան սովորել եր ամեն մի զգացմունք վեր ածել գործության հենց իսկույն։ Նա ուզում եր, ինչով ել լինի, իր սերն արտահայտել դեպի Սերգեյ Ալեքսեյիչը։ Այդպես եյին անվանում ծերունուն։ Ամեն անգամ, ծերունում մոտ գալիս, յերբ նա զբաղված եր լինում իր պարզ ճաշի պատրաստությունով, կամացուկ վերցնում եր փալասը և ավելը, հավաքում եր նոտաները, ամեն տեղ մաքրում եր փոշին և ավլում եր հասակը։ Ծերունին, սենյակ մտնելիս, իսկույն նկատում եր փոփոխությունը։ Նա վոչինչ չեր ասում Դանիկին, բայց աչքերն այնպես եյին փայլում մի տեսակ լույսով, վոր Դանիկին կյանք տվեց։ Նա համառորեն ամեն տեսակ միջոցներ եր մտածում, վոր կարողանա բավականություն պատճառել Սերգեյ Ալեքսեյիչին։

Ծերունու և մանկան բարեկամությունը, գնալով, ամրանում եր։ Ծերունին քիչ-քիչ պատմեց իր մասին, թէ ինքն ով ե յեղել։ Զահել ժամանակ յերազել ե դառնալ նշանավոր յերաժիշտ, բայց հետո աղքատությունն ու ընտանիքը նրան կերան, մաշեցին։ Յեվ նա դարձալ յերգեցողության ուսուցիչ։ Հետո մեռան և կինը, և յերեխաները, ու նա մնաց մենակ այս տնակում—կանաչ ցանկապատի յետև։ Առաջ աղմկոտ եռ և ուրախ, իմաց գերեզմանի պես լուռ։ Ծերունին քաղաքում մի քանի դասեր ուներ. ապրում եր մեն-մենակ։

Միայն յերաժշտությունն եր, վորցցում եր վիշտը։ Յերաժշտությունը մոռացնել եր տալիս ցավը, վիրավորանքը և մենակյաց ծերությունը։ Պատահաբար հանդիպած մանուկն իր դարմոնով գալիս եր և քիչ աժխուժացնում տունը։ Նա գլորվում եր Բողարի հետ հատակին, ինչպես 10 տարեկան յերեխա, և իր դարմոնիկին՝ այնպես եր տիրապետում, ինչպես փորձված արտիստ։

Յերաժշտական գիտելիքները, վոր հաղորդում եր Սերգեյ Ալեքսեյիչը, նա ուղղակի վորսում եր ողիմեջ։ Գործի քիչ դանդաղելու պատճառն այն եր, վոր նա սովորում եր նոտաները. բայց մանուկն այնքան ջանք և համբերություն գործ դրեց, վորվերջապես նոտաները սովորեց։

Սերգեյ Ալեքսեյիչը սկսեց նրան յերաժշտության դասեր տալ։ Յերեխան ամեն անգամ, դասից գնալիս, մի անձանոթ ուրախություն եր զգում, սիրտը բաբախում եր, հոգին լիքը հնչյուններով։

Մայրն իմացավ, վոր տղան դնում ե յերաժշտության դասեր առնելու, բայց Դանիկի սպասածին հակառակ, նա անտարբեր վերաբերմունք ունեցավ։

— Իհարկե, յերաժշտությունը մի կտոր հաց տվողը չի, բայց գոնե թող չարություն չանի Դանիկը։

Դանիկը դավաճանեց իր գարմոնին։ Սերգեյ Ալեքսեյիչը նրա ձեռքը տվեց լակած, լիանչյուն ջութակը։ Գարմոնն ընկած եր սընդուկի մեջ։ Դանիկը միշտ զգում եր նրա առաջ իր ունեցած մեղքը։ Յերեխն հանում եր, անտղում եր և հառաջով դնում եր տեղը։

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԱՐԻՆԵՐԸ

Վազում ե, վազում ե ժամանակն աննկատելի։ Ահա արդեն մի տարի յե, ինչ Դանիկը սովորում ե Սերգեյ Ալեքսեյիչի մոտ, արդեն յերկու տարի յե և արդեն յերրորդն ել վերջանալու վրա յե։

Մանուկն աճեց և արագ զարգացավ։ Յերեկով յերաժշտություն և խորհրդային աշխատանքի դպրոց (Սերգեյ Ալեքսեյիչի դրդմամք), յերեկոյան՝ կրկին պարապմունքներ, վիշերով՝ գրքեր։

Ծերունու մեծ գրադարանում կային համաշխարհային գրողների գըրքերը, վոր հավաքել եր մենակության տարիները։ Գրքերի հաջող ընտրությունը յերեխային հնարավորություն տվեց ծանոթանալու մարդկանց խելքի ամենալավ ստեղծագործություններին։

Իսկ յերաժշտությունը ծանոթացրեց մանկանը ստեղծագործության մյուս կողմի հետ։

Այդպես անգույն աշխատանքով անցան ելի մի քանի տարիներ։ Փոքրիկ քաղաքում, Դանիկի փոքրիկ աշխարհում համարյա վոչ մի



փոփոխություն չկար: Միայն նրա մայրը հաճախ ու հաճախ գանգատվում եր կարիքից և ծանր աշխատանքից: Դանիկը տեսնում եր, թե ինչպես մայրը լղարում ե. և ինչպես վերջերս դեմքը սրվել ե:

Նա խղճում եր մորը, խղճում եր, վոր նա միսում ե իր վերջին ուժերը նրան և իրեն կերակրելու համար: Դանիկը՝ այդ ծանր դրությունից դուրս զալու համար՝ յելք եր փնտում: Նա այնքան եր մտածում այդ մասին, վոր մինչև անգամ սկսեց անուշաղիր վերաբերմունք ունենալ դեպի պարապմունքները:

— Քեզ ի՞նչ ե պատահել...—հարցը բարկացած Սերգեյ Ալեքսեյիչը: Դանիկն այնպես եր կպել այս մի քանի տարվա մեջ ծերունուն և այնպես եր սիրում նրան, վոր առանց թագյնելու պատմեց իր վիշտը:

— Ամենամեծ ամոթը, Սերգեյ Ալեքսեյիչ, ինձ համար այն ե, վոր յես արդեն մեծ եմ, 13 տարիս ել լրանալու վրա յե, բայց վոչ մի բան չեմ անում:

Սերգեյ Ալեքսեյիչը ժպտաց. այդքան տարի «վոչինչ չանող Դանիկը» այնքան գործ կատարեց, ինչպիսի գործ չեր կատարի ամեն մի չափահաս մարդ:

— Անելն անում ես,—ասավ ծերունին,—բայց մի բան պիտի վաստակես, այդ ճիշտ ե: Սպասիր, յես կխոսեմ ում հետ պետք ե, գուցե քեզ համար մի աշխատանք գտնենք...

Մի քանի որից հետո Դանիկը սուրհանդակ մտավ խորհրդային հիմնարկներից մեկում: Դպրոցից հետո նա այդ հիմնարկի ծրարները ցրում եր քաղաքի մեջ: Այդ նրանից 2—3 ժամ ժամանակ եր խլում: Ինարկե, քիչ ել վճարում եյին: Բայց ելի մի կտոր հաց ուներ:

Դանիկը զվարթացավ և հանգստացավ: Նա նոր յեռանդով ձեռք առավ գրքերը և ջութակը: Գործերը լավ եյին գնում: Ուրախացավ և մայրը Դանիկի ոգնության վրա: Կարիքը թեթևացավ:

— Գիտես ինչ տղա յե, ինչ տղա յե,—ասում եր մայրը հարեվանունուն,—ժամանակ կլինի, վոր բերանից խոսք դուրս չես քաշի, կպչում ե գրքից, չես պոկի, ինչ ուզում ես ասա, կասի «մի խանգարի»: Զութակ ածելիս վոր՝ չլինի մոտենաս: Այ, տեսնում ես, նա ծառայության ե մտել, խղճում ե մորը...

Սերգեյ Ալեքսեյիչը նույնպես շատ ուրախ եր աղքակույտի մոտ գտնված յերեխայի վրա:

Ծերունին գովում եր նրան իր առանձին ձեռվը.

— Դու տաղանդ ունես, դրա համար գովել հարկավոր չի, բայց քո աշխատանքն ե, վոր յես գնահատում եմ... — ասում եր նա յերեխային:

## ԱՌԱՋԻՆ ՅԵԼՈՒՅԹԸԸ

— Ուզում ես ինձ հետ համերգին նվագել,—հարցը Դանիկին Սերգեյ Ալեքսեյիչը:

— Ի՞նչ համերդ, —յերկմտած հարցը Դանիկը:

Նա յեղել ե Սերգեյ Ալեքսեյիչի հետ համերգներին, բայց այնտեղ նվագում եյին այնպես չափահաս, լուրջ մարդիկ, ուր կմնա ինքը...

— Ե, այդ համերգը կլինի մանկական...—հանգստացրեց նրան Սերգեյ Ալեքսեյիչը:

— Ինչպես մանկական...—Դանիկն ավելի ու ավելի յերկմտանքի մեջ եր ընկնում:

— Ե, սպասիր, յես կբացատրեմ քեզ բոլորն, ինչպես պետքն ե, —ասավ Սերգեյ Ալեքսեյիչը: —Ինձ հրավիրեցին մանկական տուն՝ համերգին մասնակցելու: Յես ուզում եմ, վոր դու ել նվագես մանուկների համար: Այդ հետաքրքիր կլինի, յերբ նրանց պես մանուկը ջութակ նվագի:

Դանիկը մտահոգվեց. սարսափելի բան ե, ինչպես դուրս գալ մարդկանց առաջ: Քանի աչք կնայի քեզ վրա, իսկ դու բոլորովին մենակ: Բայց թե հետաքրքիր բան ե:

Նա իր միտքը բացեց ուսուցչի առաջ:

— Ե, ինչ, թե վախում ես՝ պետք չե, —չարացնում եր նրան Սերգեյ Ալեքսեյիչը:

— Ի՞նչպես, ով ե վախողը: Յես չեմ վախում, յես կնվագեմ, Սերգեյ Ալեքսեյիչ:

Սերգեյ Ալեքսեյիչն ընտրեց մի քանի ժաղովրդական յերգեր, իսկ հետո՝ մի հեշտ հեղափոխական քայլերգ:

— Առաջ քայլերգը կնվագես, հետո՝ յերգերից մեկը։ Դեհ, մի նվագիր տեսնեմ։

Սկսվեց փորձը։ Սերգեյ Ալեքսեյիչը դոհ եր փորձից։ Յերեխան լավ եր նվագում։

Տուն գալով՝ Դանիկը ձեռք առավ ջութակը։ «Պիտի կրկնել, — մտածում եր նա. — վայ թե մոլորվեմ, ամոթ ե»։

Նա վազուց սովորել եր ամբողջ պիեսը, բայց վոչ մի կերպ չեր կարողանում պոկ գալ ջութակից։ Նա նվագում եր, մինչև վոր մայրը քշեր նրան քնելու։

Յեկավ համերգի որը։ Դանիկը առավոտից ման եր գալիս՝ ինքն ել չգիտեր ինչպես։ Ամեն ըոսե հիշում եր նա — «այսոր»։ Վախը և հետաքրքրությունը խառնվում եյին իրար նրա սրտում։ Իսկ Սերգեյ Ալեքսեյիչն ել արգելել եր նրան այսոր նվագելը։

— Կխորտակվեմ, անշուշտ... — հուսահատված մտածում եր Դանիկը։

Գլխավոր սպիտակ մարմարե սանդուխքով վեր եյին բարձրանում Դանիկը և Սերգեյ Ալեքսեյիչը։

Կուշտ, ուրախ, միակերպ հագնված յերեխաները խումբ-խումբ հանդիպում եյին նրանց։

— Սերգեյ Ալեքսեյիչ, ով ե սրանց կերակրում, հազյնում և այսպիսի լավ տուն ե տվել։ Յեվ վորտեղից են այդքան շատ հավաքել նրանք, — հարցնում ե Դանիկը։

— Գիտես ինչ։ Կովից, հեղափոխությունից և սովից հետո մնացին շատ վորբեր, և ահա նրանց հավաքել են վայստեղ. բայց նրանց կերակրողը և հազցնողը Խորհրդային իշխանությունն ե։

— Այդ շատ լավ բան ե, Սերգեյ Ալեքսեյիչ, — համոզմունքով ասավ Դանիկը։ — Յես այստեղ տեսնում եմ այնպիսի փոքրիկ յերեխաներ, վորոնք կարող եյին կատավի ճուտերի նման վոչնչանալ, բայց ապրում են, սովորում են և դեռ ժամանակին ել մարդ կդառնան։

— Այն ել ինչպիսի մարդ, յեղբայր։ Յես մի ուրիշ տան մանուկներին յերաժշտություն եմ սովորեցնում և գիտես ինչպիսի ընդունակները կան։

Զանգն ընդհատեց նրանց խոսակցությունը։





Շուտով յելույթ պիտի ունենար Սերգեյ Ալեքսեյիչը:  
Դանիկը կուխաների միջից լսում եր յերգ և նվազ: Քիչ-քիչ՝  
հուսահատությունը նորից մտավ նրա սիրալ:

— Ե, միթե կկարողանամ այդպես:

Վերջապես, Սերգեյ Ալեքսեյիչը մի թեթև բոթեց նրան դեպի  
բեմը: Նա հիշեց, վոր պիտի գլուխ տալ: Դաշնամուրի յետեկից նրան  
քաղցր ժպատաց ակոմպանիատորը: Հետո՝ արդեն մարդկային  
դեմքերի ծովը:

Հենց վոր Դանիկը ձեռք առավ ջութակը, վախի վերջին կաթիլը  
նրա սրտից անհայտացավ:

Հանդիսա և հավատացած սարքեց իր ջութակը և զլսով արավ,  
վոր նա սկսի: Կայտառ զնզգնդացին առաջին բախումները հեղափո-  
խական քայլերգի, ժամանակին մեջ մտավ Դանիկի ջութակը,  
համարձակ և վստահ տարավ իր յետեկից դաշնամուրը:

Դանիկը մոռացավ համերգը, հանդիսականներին և բոլոր իր  
վրա նայողներին. Նա միայն մի բան եր հիշում. այն ե՞ւ դաշնամուրը  
և իր յելույթը:


Վերջ: Կեցցեների փոթորիկը շարժեց ահազին, սյունազարդ  
դահլիճը: Մանուկները վեր թռան տեղերից, ծափահարեցին և ձայն  
տվին: Նրանք մի քիչ զիտեյին Դանիկի ով լինելը և հիմա փողու-  
նում ելին այն յեռանդը, վոր հաղթեց չքավորությունը, կարիքն  
և անտերությունը:

Հաջողությունը կատարյալ եր: Դանիկը ծանոթացավ մանուկ-  
ների հետ, վորոնք ցույց ելին տալիս նրան ուշադրության ամեն  
տեսակ նշաններ,—նրանք հարց ու փորձ արին նրա կյանքից,  
ծնողների, դպրոցի, ուսուցիչների մասին: Նա պատմեց և ինքն ել  
հարցեր տվեց:

Դանիկն ուրախանում եր նրանց համար այնպես, ինչպես  
իր համար:

— Ե, այդ լավ ե վոր ձեզ այդպես տեղավորել ե: Յեվ  
կուշտ եք, և հագնված եք, և սովորում եք...+

— Մեզ համար հոգացողը Խորհրդային իշխանությունն ե,—  
հպարտությամբ հայտնեց մի հինգ տարեկան պստիկ:



Նոր բարեկամները ուշ ցըկեցին, պատմելով իրար թե ինչպես  
անցկացրին յերեկոն:

— Ե, ինչ, սովորեցրի քեզ, սովորեցրի,—ասավ Սերգեյ Ալեք-  
սեյիչը Դանիկին համերգը տալուց հետո,—հարկավոր ե զործը մինչև  
վերջը տանել, հարկավոր ե ոգնել, վոր դու սովորես: Յես Մոսկ-  
վայում կապեր ունեմ: Մի բան ել ե դուրս կզա: — Յեվ նա սկսեց  
յեռանդով հոգալ, գրում եր և ստանում եր շատ նամակներ և մինչև  
անգամ մի շաբաթով գնաց Մոսկա:

Դանիկը չափազանց մեծ  
անհանգստությամբ սպա-  
սում եր նրան: Ծերունին  
վերադարձավ հոգնած, բայց  
դոհ:

— Ե, յես հիմա հոգ-  
նեցի շրջելուց: Դժվար ե  
ծեր վոսկորները քարշ տալ:  
Հիմա դու գնա:

Դանիկը մի ամսից հետո  
զնաց բարձրագույն յերա-  
ծըշտական դպրոց:

## ՓԱՌՔԸ

Յեռում ե ամբոխը հենց  
նոր կառուցած թատրոնի  
զիսավոր մուտքի առաջ: Յեր-  
կար շղթայի պես կառքերը  
ձգվում ելին դեպի պայ-  
ծառ լուսավորված մուտքը:  
Այդ բախտավորներն են, վո-  
րոնք տոմսեր են ստացել:

Դանիկն ել ավելի լուսավորեցին: Նվազախումբը լարում ե  
զործիքները. բեմի յետեկի սենյակում նշանավոր ջութակահարը  
խոսում է յուրայինների հետ, զիտենալով, վոր շուտով վերահաս



հըաժեշտը նորից իրեն կրաժանի նրանցից։ Մոտիկ մարդիկ յերկուսն-  
են։ Միրուքը յերկար, բարձրահասակ ծերունին և մի հասարակ կին-  
հագին բրդե դեյրա։

Զանգն ընդհատեց ջութակահարի աշխուժ խոսակցությունը իր  
հարազատ մարդկանց հետ։

— Սկսվում ե, պիտի գնալ...—ասավ Դանիկը։ Նա ինքն եր-  
ինչպես մյուս սենյակում՝ նա հանդիստ դուրս յեկավ բեմ։  
ծափահարությունների փոթորիկը շարժեց թատրոնը բազկաթոռներին  
առաջին շարքերից մինչև յետին շարքերը։

Դանիկը ձեռքն առավ ջութակը։

Շարժեց ջութակի աղեղը և ձգվեցին թեթև ճիշտուի յետեից  
բոլոր հնչյունները, վորովհետև մեծ հաճույք և մեծ ուժ եյին թագ-  
նված աղեղի թեթև շարժումներում։


Ահա հազարավոր մարդիկ Դանիկի իշխանության տակ։ Նա  
կարող է ստիպել, վոր լան և խնդան իր ուզածի պես, կարող է  
ստիպել, վոր հիշեն այն, վոր յերբեք չի յեղել, կարող է ստիպել,  
վոր իրենց մոռանան։

Զեռքի թեթև շարժումով Դանիկը տանում եր իր ունկնդիրներին  
միայն այն ճանապարհներով, վոր միայն իրեն են հասկանալի, միայն  
իրեն են ծանոթ։

Նշանավոր ջութակահարի հաջողությունն աճում եր նրա ամեն  
մի յելույթով։ Առաջին մասի վերջում [Դանիկը դուրս յեկավ բեմ։  
Նվազակցող դաշնակահարը դուրս յեկավ նրա յետեից, նստեց դաշ-  
նամուրի մոտ և բացեց նոտաները։

Լսվեցին առաջին հնչյունները նվազակցի։ Ջութակահարի ձեռ-  
քում յերեսաց մի ինչ վոր փայլուն իր։ Այդ բնչ բան եր։ Սովորական  
բերանի գարմոնիկա, վոր յերկու շահով ամեն տեղ կարելի յե առներ։

Հոսում եր յերգը, պարզ, ինչպես թռչնի ճլվոցը, և սիրելի,  
այդ ճլվոցի պես։ Դաշնամուրի ակոմպանիմենտն առանձնապես շեշտեց  
և խորացրեց յերգը, ամբողջացրեց և նշանակալից դարձեց նրան։  
Յերգը դուրս յեկավ ել ավելի գեղեցիկ՝ իր պարզությամբ։ Ահա և  
վերջացավ։ Դանիկը ավելի աղմկալից փոթորիկ բարձրացավ՝  
քան թե առաջ։



## ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐՎԵՑ

Անտրակախն, հանգատանալու ժամանակ՝ բեմի յետեի սենյակում  
նստած ե Դանիկը և լսում է, թե ինչ է խոսում Սերգեյ Ալեքսեյիչը  
հյուրերի հետ:

— Այո, յերաժշտությունը մի ամբողջ աշխարհ ե, դեռ չճանաչված  
ահազին աշխարհ, — ասավ նրանցից մեկը:

— Ամբողջ աշխարհ ե... — արձագանքեց Դանիկի գլխում:

Յեվ հանկարծ նա հիշեց նեղիկ, կեղոսոս քուչան, յերեք բորբոք  
յերեխային, սեաչյա մանրավաճառին, վորից գնած այն զարմանալի  
գարմոնիկան՝ իր կյանքը այնպես փոխեց:

Հիշեց մանրավաճառի խոսքերը. «գարմոնիկան պահես՝ աշխարհ  
կտիրես»:

Միթե այդ ճիշտ չի. Միթե նա աշխարհ չափրեց փոքրիկ, թի-  
թեղյա գարմոնիկայի ոգնությամբ, զինը յերկու շահի:

— Վերջին նվազածդինչեր, — հարցրեց Դանիկին հյուրերից մեկը:

— Այդ իմ հորինած յերգն եր. այդ յերգը 10 տարեկան ժամա-  
նակս եմ հորինել՝ նստած ձորակում՝ աղբանոցի մոտ. Ճիշտ ե, յես  
նրան մի քանի անգամ մշակել եմ:

— Յերգը հրաշալի յե... — խոսեց մի ուրիշը:

— Բայց գարմոնիկան վորտեղից ճարվեց այս համերգին:

— Յես նրանից յերբեք չեմ բաժանվում: Այս գարմոնիկայի,  
մանկական խաղալիքի շնորհիվ յես նվաճեցի այժմյան դրությունս:  
Յեթե չիներ նա, յես մինչև հիմա ապրում կլինեյի աղբանոցի մոտ  
և յերբեք չեյի իմանալ այն, ինչ վոր հիմա գիտեմ: Յես պահում եմ  
նրան ինձ մոտ՝ գրպանումս, հասարակության առաջ դուրս գալու  
ժամանակ:

## «ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ» ՊԻԵՍԱՆ

Մեծարելուն և բեմ դուրս կանչելուն չափ ու սահման չկար:  
Հանդիսականները վճռեցին մնալ և ինդրել, իբրև վողորմություն,  
իրենց համար ելի մի քիչ ուրախություն:

Դուրս կանչելը չեր ընդհատվում:



Դանիկը մի կողմ կանչեց համերգի կարգադրիչին և սկսեց մի ինչ վոր բան ասել նրան։ Կարգադրիչը, ուշադրությամբ լսելով, մի քանի անգամ գանգուր ալեհեր գլուխը խոնարհեցրեց Դանիկի առաջ։

— Շատ լավ... — հարգանքով ասավ նա, զլուխ խոնարհելով վերջին անգամ։

Մի քանի ըոպեյից հետո հասարակությանը հայտարարվեց, վոր նշանավոր ջութակահարը կնվագի առաջին անգամ իր նոր ստեղծագործությունը՝ «Հեղափոխություն» պիեսան։

Վերջին մի քանի տարվա ընթացքում Դանիկը շատ եր ընտելացել հասարակական յելույթների և հաջողություն եր ունեցել. այսոր առաջին անգամն եր, վոր զգում եր մի տեսակ հուզմունք։

Այդ պիեսը նա նվազում եր առաջին անգամ հասարակության առաջ։ Յեվ նրան հուզողն այն եր, վոր դա իր հայրենի քաղաքն եր, վորտեղ անհաջողությունն առանձնապես զգալի կլիներ։

Հեղափոխությունը, վոր բոլորը հիշում են և ապրել են և վորի վրայից անցել ե 10 տարի, հեղափոխությունը, վոր փոխել ե միլիոն-միլիոնավոր մարդկանց դրությունն արմատապես, փոքր թեմա չեր, վորին թեթև սրտով մոտեցվեր։

Դանիկը մի քանի տարի յեր աշխատել իր մտքի արտադրության վրա, աշխատել եր համառ, տոկուն, կշռելով ամեն մի հնչյուն, գրչի ամեն մի շարժում։

Յեվ ահա դատաստան ե։

— Արդյոք կհասկանան, արդյոք կզնահատեն։

Դանիկը դուրս յեկավ ամբիոն, վերցրեց ջութակը, նայեց յերաժշտականը կառավարողին, ինչպես այդ լինում ե միշտ, սովորաբար։ Միայն հասարակության համար աննկատելի՝ ջղայնորեն դողում եր բերանի անկյունը և ժամանակ առ ժամանակ ել ցնցվում եյին ձեռքերը։

Խմբակավարը ձեռքի փայտիկով նշան տվեց։

Նվազախումբն սկսեց։ Դանիկը, տիրելով իրեն, վստահ շարժեց ջութակի աղեղը և սովորական ձեռք մոտեցրեց նրան ջութակին։

Ահա հյուսվում են առույգ ձայները, նրանց խեղդում ե բանվորական մասսաների հառաջը, շղթաների զնդոցը, տաժանակիր աշխատանքի անեծքը։

Բայց ահա ելի վառվում ե մարդկային հոգու մեջ աշխատությունը, ելի կրկնվում են կոչեր՝ միանալ, արիանալ, կովել, հաղթել։ Լսվում ե առաջնորդի ձայնը, վորոտում ե՝ ինչպես վորոտը, և զնդում ե, ինչպես պողպատը։

Զութակը յերգում եր միություն, յեղբայրություն, պայքար՝ անձնակեր և տանջալից։

Հանկարծ քամու պես դուրս են ժայթքում տարած հաղթանակի ուրախության և ցնծության հնչյուններ։ Դանիկի ջութակը՝ առաջից ե գնում, նվազախումբը բռնել ե նրա ճանապարհը, բայց նա, ջութակը բոլորի վրա իշխողն ե։

Կարոտը դեպի ընդարձակ հեռուները լավում ե նրա հնչյուններում։

Զութակը յերգում եր վիշտ, յերգում եր սովի, ճնշումների մասին, պատմում եր մարդկության մեծ մասի ստորացումի, տգետության մասին։ Անահման վիշտն եր լսվում նրա հնչյուններում։

Բայց ահա հյուսվում ե մի ինչ վոր նորը, աշխատությունը, Դա կոչն ե՝ միանալու և դեպի կոփի, դեպի պայքար դիմելու։

Այս չկա միլիոնավոր բանվորների հառաջը, չկա անիծված շղթաների զնդումը։ Զութակը յերգում եր ազատ-ուրախ աշխատանքը, մարդկանց յեղբայրությունը, բախտավորությունը, յերգում եր նոր, գեղեցիկ ապագայի մասին։ Զութակը յերգում եր, և բոլորը մի մարդու պես վեր կացան և շնչառապ լսում եյին այդ ցնծության հիմնը։ Ու բարձր ու բարձր եր կանգնած ամբոխից՝ այն աղքատությունից և աղբանոցից դուրս յեկած գունատ, բայց փայլող դեմքով ջանել յերաժիշտը։

\* \* \*



Դանիկը մի կողմ կանչեց համերգի կարգադրիչին և սկսեց մի ինչ վոր բան ասել նրան։ Կարգադրիչը, ուշադրությամբ լսելով, մի քանի անգամ գանգուր ալեհեր գլուխը խոնարհեցրեց Դանիկի առաջ։

— Շատ լավ... — հարգանքով ասավ նա, գլուխ խոնարհելով վերջին անգամ։

Մի քանի բոպեյից հետո հասարակությանը հայտարարվեց, վոր նշանավոր ջութակահարը կնվազի առաջին անգամ իր նոր ստեղծագործունը՝ «Հեղափոխություն» պիեսան։

Վերջին մի քանի տարվա ընթացքում Դանիկը շատ եր ընտելացել հասարակական յելույթների և հաջողություն եր ունեցել. այսոր առաջին անգամն եր, վոր զգում եր մի տեսակ հուզմունք։

Այդ պիեսը նա նվազում եր առաջին անգամ հասարակության առաջ։ Յեվ նրան հուզողն այն եր, վոր դա իր հայրենի քաղաքն եր, վորտեղ անհաջողությունն առանձնապես զգալի կլիներ։

Հեղափոխությունը, վոր բոլորը հիշում են և ապրել են և վորի վրայից անցել ե 10 տարի, հեղափոխությունը, վոր փոխել ե միլիոն-միլիոնավոր մարդկանց զրությունն արմատապես, փոքր թեմա չեր, վորին թեթև սրտով մոտեցվեր։

Դանիկը մի քանի տարի յեր աշխատել իր մտքի արտադրության վրա, աշխատել եր համառ, տոկուն, կշռելով ամեն մի հնչյուն, գրչի ամեն մի շարժում։

Յեվ ահա դատաստան եւ։

— Արդյո՞ք կհասկանան, արդյո՞ք կդնահատեն։

Դանիկը գուրս յեկավ ամբիոն, վերցրեց ջութակը, նայեց յերաշըշտախումբը կառավարողին, ինչպես այդ ինում ե միշտ, սովորաբար։ Միայն հասարակության համար աննկատելի՝ ջղայնորեն գողում եր բերանի անկյունը և ժամանակ առ ժամանակ ել ցնցվում ելին ձեռքերը։

Խմբակավարը ձեռքի փայտիկով նշան տվեց։

Նվազախումբն սկսեց։ Դանիկը, տիրելով իրեն, վստահ շարժեց ջութակի աղեղը և սովորական ձեռք մոտեցրեց նրան ջութակին։

Ահա հյուսվում են առույդ ձայները, նրանց խեղում ե բանվորական մասսաների հառաջը, շղթաների զնոցը, տաժանակիր աշխատանքի անեծքը։

Բայց ահա ելի վառվում ե մարդկային հոգու մեջ աշխատությունը, ելի կրկնվում են կոչեր՝ միանալ, արիանալ, կովել, հաղթել։ Լսվում ե առաջնորդի ձայնը, վորոտում ե՝ ինչպես վորոտը, և զնում ե, ինչպես պողպատը։

Զութակը յերգում եր միություն, յեղբայրություն, պայքար՝ անձնվեր և տանջալից։

Հանկարծ քամու պես դուրս են ժայթքում տարած հաղթանակի ուրախության և ցնծության հնչյուններ։ Դանիկի ջութակը՝ առաջից ե գնում, նվազախումբը բռնել ե նրա ճանապարհը, բայց նա, ջութակը բոլորի վրա իշխողն ե։

Կարուը դեպի ընդարձակ հեռուները լավում ե նրա հնչյուններում։

Զութակը յերգում եր վիշտ, յերգում եր սովի, ճնշումների մասին, պատմում եր մարդկության մեծ մասի ստորացումի, տղետության մասին։ Անսահման վիշտն եր լսվում նրա հնչյուններում։

Բայց ահա հյուսվում ե մի ինչ վոր նորը, աշխատժը։ Դա կոչն ե՝ միանալու և դեպի կոփվ, դեպի պայքար դիմելու։

Այլևս չկա միլիոնավոր բանվորների հառաջը, չկա անիծված շղթաների զնոցնոցը։ Զութակը յերգում եր աղատ-ուրախ աշխատանքը, մարդկանց յեղբայրությունը, բախտավորությունը, յերգում եր նոր, գեղեցիկ ապագայի մասին։ Զութակը յերգում եր, և բոլորը մի մարդու պես վեր կացան և շնչասպառ լսում ելին այդ ցնծության հիմնը։ Ու բարձր ու բարձր եր կանգնած ամբոխից՝ այն աղքատությունից և աղբանոցից դուրս յեկած գունատ, բայց փայլող դեմքով շահել յերաժիշտը։

\* \* \*



ՊԱՅԱՆՁԵՑԵՔ  
ՄԵՐ ԼՐԻՎ  
ԳՐԱՑՈՒՑԱԿԸ



NL0383661

437 17517

3456

6225

33 40т.

807

нр 1

801 2



---

Леон  
Данька музыкант

---

На армянск. языке

---

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СОЮЗА ССР  
Москва, центр, Никольская, 10